

**Հանձնաժողովի 2009թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 1270/2009 (ԵՄ)
կանոնակարգ**

Անասնակերի մեջ որոշ հավելումների մշտական թույլտվության մասին

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

Պաշտոնական տեղեկագիր L 339 , 22.12. 2009թ., էջ 0028 - 0031

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով անասնակերի մեջ հավելումներին վերաբերող՝ Խորհրդի 1970թվականի նոյեմբերի 23-ի 70/524/ԵՏՀ¹ հրահանգը եւ, մասնավորապես, դրա 3-րդ հոդվածի եւ 9-րդ հոդվածի 1-ին պարբերությունը,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ 2003 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1831/2003 (ԵՀ) կանոնակարգը՝ կենդանական ծագում ունեցող կերի մեջ հավելումների օգտագործման մասին² եւ, մասնավորապես, դրա 2(25)-րդ հոդվածը,

Քանի որ

1) (ԵՄ) թիվ 1831/2003 կանոնակարգով նախատեսվում է թույլատրել կենդանական ծագում ունեցող կերի մեջ հավելումների օգտագործումը,

2) (ԵՄ) թիվ 1831/2003 կանոնակարգի 25-րդ հոդվածով սահմանվում է կերային հավելումների թույլտվություն ստանալու դիմումների համար 70/524/ԵՏՀ հրահանգի համաձայն ներկայացված անցումային միջոցառումներ՝ նախքան (ԵՄ) թիվ 1831/2003 կանոնակարգի կիրառման ամսաթիվը,

3) սույն Կանոնակարգի հավելվածներով սահմանված հավելումները թույլատրելու դիմումները ներկայացվել են՝ նախքան (ԵՄ) թիվ 1831/2003 կանոնակարգի կիրառման ամսաթիվը,

¹ ՊՏ L 270, 14.12.1970թ., էջ 1:

² ՊՏ L 268, 18.10.2003թ., էջ 29:

4) թույլտվության դիմումների վերաբերյալ նախնական դիտողությունները, որոնք նախատեսված են 70/524/ԵՏՀ հրահանգի 4-րդ հոդվածի 4-րդ կետով, ուղարկվել են Հանձնաժողով՝ նախքան (ԵՄ) թիվ 1831/2003 կանոնակարգի կիրառման ամսաթիվը: Այդ դիմումները հետեւաբար, շարունակվում են դիտարկվել 70/524/ԵՏՀ հրահանգի 4-րդ հոդվածին համապատասխան,

5) Հանձնաժողովի թիվ 2374/1998 (ԵՀ) կանոնակարգի համաձայն՝ *Trichoderma reesei* սնկի (CBS 526,94) արտադրած էնդո-1,3 (4)-բետագլյուկոնազայի ֆերմենտատիվ պատրաստուկի օգտագործումը որոշ վերապահումներով թույլատրվել է խոճկորների համար³: Հանձնաժողովի թիվ 2036/2005⁴ (ԵՀ) կանոնակարգի համաձայն՝ բտման եւ գիրացման համար նախատեսված ճտերի համար այն թույլատրվել է առանց ժամկետային սահմանափակման: Առանց ժամկետային սահմանափակման՝ կաթից կտրված խոճկորների ֆերմենտատիվ պատրաստուկի համար թույլտվություն ստանալու դիմումը հիմնավորող նոր տվյալներ են ներկայացվել: Գնահատման արդյունքում պարզվել է, որ այդպիսի թույլտվություն ստանալու համար 70/524/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդվածով սահմանված պայմանները բավարարվել են: Համապատասխանաբար, այդ ֆերմենտատիվ պատրաստուկի օգտագործումը, ինչպես սահմանված է սույն Կանոնակարգի I-ին հավելվածով, պետք է թույլատրվի առանց ժամկետային սահմանափակման,

6) *Aspergillus aculeatus* (CBS 589,94) սնկի արտադրած էնդո-1,3⁵ բետագլյուկոնազայի, *Trichoderma longibrachiatum* (CBS 592,94) սնկի արտադրած էնդո-1,4 բետագլյուկոնազայի, *Bacillus amyloliquefaciens* (DSM 9553)-ի արտադրած ալֆա-ամիլազայի, *Bacillus amyloliquefaciens* (DSM 9554)-ի արտադրած bacillolysin-ի եւ *Trichoderma viride* (NIBH FERM BP 4842)-ի արտադրած էնդո-1,4 բետա-քսիլանազայի ֆերմենտատիվ պատրաստուկների օգտագործումը խոճկորների համար թույլատրվել է որոշ վերապահումներով: Հանձնաժողովի թիվ 252/2006 (ԵՀ) կանոնակարգի համաձայն՝ դրանց օգտագործումը բտման եւ գիրացման համար նախատեսված հնդկահավերի համար թույլատրվել է որոշ

³ ՊՏ L 295, 04.11.1998թ., էջ 3:

⁴ ՊՏ L 328, 15.12.2005թ., էջ 13:

⁵ ՊՏ L 299, 15.11.2001թ., էջ 1

վերապահումներով⁶: Հանձնաժողովի թիվ 358/2005 (ԵՀ) կանոնակարգի համաձայն՝ այն թույլատրվել է առանց ժամկետային սահմանափակման՝ բտման եւ գիրացման համար նախատեսված ճտերի համար⁷ եւ, որոշ վերապահումներով, Հանձնաժողովի թիվ 1140/2007 (ԵՀ) կանոնակարգի համաձայն, թխսկան հավերի համար⁸: Առանց ժամկետային սահմանափակման՝ բտման եւ գիրացման ենթակա հնդկահավերի եւ կաթից կտրված խոճկորների համար այդ ֆերմենտային պատրաստուկների թույլատրման մասին դիմումը հիմնավորող նոր տվյալներ են ներկայացվել: Գնահատման արդյունքում պարզվել է, որ այդպիսի թույլտվություն ստանալու համար 70/524/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդվածով սահմանված պայմանները բավարարվել են: Համապատասխանաբար, այդ ֆերմենտատիվ պատրաստուկի օգտագործումը, ինչպես սահմանված է սույն Կանոնակարգի II հավելվածով, պետք է թույլատրվի առանց ժամկետային սահմանափակման:

7) Սույն Կանոնակարգով նախատեսված միջոցառումները համապատասխանում են Սննդի շղթայի եւ կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

«Ֆերմենտների» դասին պատկանող պատրաստուկը, ինչպես սահմանված է I հավելվածում, թույլատրվել է օգտագործել որպես կենդանական կերի հավելում առանց ժամկետային սահմանափակման՝ ըստ այդ հավելվածով սահմանված պայմանների:

Հոդված 2

⁶ ՊՏ L 44, 15.02.2006թ., էջ 3:

⁷ ՊՏ L 57, 03.03. 2005թ., էջ 3:

⁸ ՊՏ L 256, 02.10.2007թ., էջ 14:

«Ֆերմենտների» դասին պատկանող պատրաստուկը, ինչպես սահմանված է II հավելվածում, թույլատրվել է օգտագործել որպես կենդանական ծագում ունեցող կերի հավելում առանց ժամկետային սահմանափակման՝ ըստ այդ հավելվածով սահմանված պայմանների:

Հոդված 3

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր եւ անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում, 2009 թվականի դեկտեմբերի 21-ին:

Հանձնաժողովի կողմից

Նախագահ՝

Խոսե Մանուել Բառոսո

ՀԱՎԵԼՎԱԾ I

ԵՀ թիվ | Հավելում | Քիմիական բանաձև, նկարագրություն | կենդանու տեսակը
կամ կատեգորիան | Առավելագույն տարիքը | Նվազագույն բովանդակությունը |
Առավելագույն բովանդակությունը | Այլ դրույթներ | թույլատրման ժամկետի
ավարտը|

Անասնակերի օրաբաժնում ֆերմենտային ակտիվության միավորները/կգ |

Ֆերմենտներ

Ե 1636 | Էնդո-1,3(4)-բետադյուկոնազա ԵՀ 3.2.1.6 | *Trichoderma reesei* (CBS 526.94)-ի արտադրած էնդո-1,3(4)-բետադյուկոնազայի պատրաստուկ հետեւյալ նվազագույն ակտիվությամբ. Պինդ վիճակ. 700000 BU [1]/գ հեղուկ վիճակ. 300000 BU/գ | Խոճկորներ (կաթից կտրված) | — | 17500 BU | — | 1.Հավելման եւ պրեմիքսների օգտագործման ուղեցույցներում նշել պահպանման ջերմաստիճանը, պահպանման ժամկետը եւ ցենտրիֆուգումից առաջացած նստվածքի կայունությունը: 2.Օգտագործվում են կաթից կտրված՝ մինչեւ 35կգ քաշ ունեցող խոճկորների համար: 3.Կերերի օրաբաժնի առաջարկվող չափաբաժինը՝ մեկ կիլոգրամի համար: 17500-50000 BU. 4.Օսլա չպարունակող պոլիսախարիդներով (հիմնականում գլյուկաններով) հարուստ համակցված կերերի օգտագործման համար.օրինակ՝ 60%-ից ավելի գարու կամ ցորենի պարունակությամբ: |Առանց ժամկետային սահմանափակման|

[1] 1 BU-ն ֆերմենտի այն քանակությունն է, որը գարու բետա-գլյուկանից թուփում անջատում է 0,06 միկրոմոլ ռեդուկցիայի ենթարկված շաքար (գլյուկոզայի համարժեքներ) 4,8 pH արժեքով եւ 50 °C ջերմաստիճանով:

ՀԱՎԵԼՎԱԾ II

ԵՀ թիվ | Հավելում | Քիմիական բանաձև, նկարագրություն | կենդանու տեսակը
կամ կատեգորիան | Առավելագույն տարիքը | Նվազագույն բովանդակությունը |
Առավելագույն բովանդակությունը | Այլ դրույթներ | թույլատրման ժամկետի
ավարտը|

Անասնակերի օրաբաժնում ֆերմենտային ակտիվության միավորները/կգ |

Ֆերմենտներ

Ե 1620 | Էնդո-1,3(4)-բետազյուկոնազա ԵՀ 3.2.1.6 Էնդո-1,4-բետազյուկոնազա ԵՀ
3.2.1.4 Ալֆա-ամիլազա ԵՀ 3.2.1.1 բացիլոլիզին (Bacillolysin) ԵՀ 3.4.24.28 Էնդո-1,4-
բետա-քսիլանազա ԵՀ 3.2.1.8 | *Aspergillus aculeatus* (CBS 589.94)-ի արտադրած
Էնդո-1,3(4)-բետազյուկոնազայի պատրաստուկ, *Trichoderma longibrachiatum* (CBS
592.94)-ի արտադրած Էնդո-1,4-բետազյուկոնազա, *Bacillus amyloliquefaciens* (DSM
9553)-ի արտադրած ալֆա-ամիլազա, *Bacillus amyloliquefaciens* (DSM 9554)-ի
արտադրած բացիլոլիզին (bacillolysin) եւ *Trichoderma viride* (NIBH FERM BP 4842)-ի
արտադրած Էնդո-1,4-բետա-քսիլանազա՝ հետեւյալ նվազագույն
ակտիվություններով. Էնդո-1,3(4)-բետազյուկոնազա, 2350 Ս/գ [1] Էնդո-1,4-
բետազյուկոնազա, 4000 Ս/գ [2] ալֆա-ամիլազա, 400 Ս/գ [3] բակտերոլիզին, 450
Ս/գ [4] Էնդո-1,4-բետա-քսիլանազա, 20000 Ս/գ [5] | բտման եւ գիրացման համար
նախատեսված հնդկահավեր | — | Էնդո-1,3(4)-բետազյուկոնազա, 587 Ս | — |
1.Հավելման եւ պրեմիքսների օգտագործման ուղեցույցներում նշել պահպանման
ջերմաստիճանը, պահպանման ժամկետը եւ ցենտրիֆուգումից առաջացած
նստվածքի կայունությունը: 2.Կերերի օրաբաժնի համար առաջարկվող
չափաբաժինը՝ մեկ կիլոգրամի համար. 1175-2350 Ս, Էնդո-1,4-բետազյուկոնազա,
2000-4000 Ս, ալֆա-ամիլազա, 200-400 Ս, բակտերոլիզին, 225-450 Ս, Էնդո-1,4-
բետա-քսիլանազա, 10000-20000 Ս, 3.Օսլա չպարունակող պոլիսախարիդներով
(հիմնականում բետա-գլյուկաններով եւ հատկապես արաբինոքսիլաններով)
հարուստ համակցված կերում օգտագործելու համար, օրինակ՝ ավելի քան 30 %
ցորենի պարունակությամբ: |Առանց ժամկետային սահմանափակման|

Էնդո-1,4- բետազյուկոնազա, 1000 Ս | — |

Ալֆա-ամիլազա, 100 Ս | — |

Բակտերիոլիցին, 112 Ս | — |

Էնդո-1,4 բետա-քսիլանազա, 5000 Ս | — |

Խոճկորներ (կաթից կտրված)| Էնդո-1,3(4)-բետազյուկոնազա, 1175 Ս | — |
1.Հավելման եւ պրեմիքսների օգտագործման ուղեցույցներում նշել պահպանման ջերմաստիճանը, պահպանման ժամկետը եւ ցենտրիֆուգումից առաջացած նստվածքի կայունությունը:Օգտագործվում են կաթից կտրված՝ մինչեւ 35կգ քաշ ունեցող խոճկորների համար: 3.Կերերի օրաբաժնում առաջարկվող չափաբաժինը՝ մեկ կիլոգրամի համար: Էնդո-1,3(4)-բետազյուկոնազա. 1175 Ս,Էնդո-1,4-բետազյուկոնազա, 2000 Ս,ալֆա-ամիլազա, 200 Ս,բակտերիոլիցին, 225 Ս,Էնդո-1,4-բետա-քսիլանազա, 10000 Ս,4.Օսլա չպարունակող պոլիսախարիդներով (հիմնականում բետա-զյուկաններով եւ հատկապես արաբինոքսիլաններով) հարուստ համակցված կերում օգտագործման համար, օրինակ՝ ավելի քան 30 % ցորենի պարունակությամբ: | |

Էնդո-1,4- բետազյուկոնազա, 2000 Ս | — |

Ալֆա-ամիլազա, 200 Ս | — |

Բակտերիոլիցին, 225 Ս | — |

Էնդո-1,4 բետա-քսիլանազա, 10000 Ս | — |

[1] 1 Ս-ն ֆերմենտի այն քանակությունն է, որը գարու բետա-զյուկանից թուփում անջատում է 0,0056 միկրոմոլ ռեդուկցիայի ենթարկված շաքար (զյուկոզայի համարժեքներ) 7,5 pH արժեքով եւ 30 °C ջերմաստիճանով:

[2] 1 Ս-ն ֆերմենտի այն քանակությունն է, որը կարբօքսիմեթիլցելյուլոզից թուփում անջատում է 0,0056 միկրոմոլ ռեդուկցիայի ենթարկված շաքար (զյուկոզայի համարժեքներ)՝ 4,8 pH արժեքով եւ 50 °C ջերմաստիճանով:

[3] 1 Ս-ն ֆերմենտի այն քանակությունն է, որը փոխկապված օսլա պարունակող պոլիմերից անջատում է թուփում 1 միկրոմոլ գլյուկոզա՝ 7,5 pH արժեքով եւ 37 °C ջերմաստիճանով:

[4] 1 Ս-ն ֆերմենտի այն քանակությունն է, որը թուփում լուծում է մեկ միկրոգրամ ազո-կազեինի հիմք՝ 7,5 pH արժեքով եւ 37 °C ջերմաստիճանով:

[5] 1 Ս-ն ֆերմենտի այն քանակությունն է, որը կեչու անտառի քսիլանից անջատում է թույլ տալով 0,0067 միկրոմոլ ռեդուկցիայի ենթարկված շաքար (քսիլոզի համարժեքներ)՝ 5,3 pH արժեքով եւ 50 °C ջերմաստիճանով: